

ՈւՂԵՑՈՒՅՑ

Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձը (փոխանակման կետը) իրականացնում է արտարժույթի առուվաճառքի կանխիկ գործառնություններ միայն ֆիզիկական անձանց հետ՝ ՀՀ դրամով:

Հայաստանի Հանրապետությունում արտարժույթի առուվաճառքի կանխիկ գործառնություններ կարող են իրականացնել իրավաբանական անձինք ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա:

Փոխանակման կետի լիցենզիայի ստացման, ինչպես նաև արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման այլ ընթացակարգերը կարգավորված են [«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով](#) և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված [«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ով](#):

Փոխանակման կետերը գործունեություն կարող են իրականացնել միայն հետևյալ վայրերից մեկում՝

- **ԽԱՆՈՒԹՈՒՄ**, որը պետք է ունենա առնվազն 600 քմ ընդհանուր տարածք, որից առնվազն 400 քմ մակերեսը պետք է զբաղեցնի խանութի սպասարկման սրահը, որտեղ ցուցադրված են ապրանքներն ու ծառայությունները,
- **ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**, որը պետք է ունենա առնվազն 2000 քմ փակ տարածք,
- **ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ**, որը պետք է ունենա առնվազն 1000 քմ տարածք,
- **ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ**,
- **ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ**,
- **ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ**,

Ընդ որում, փոխանակման կետի լիցենզիա կարող է ստանալ

- *խանութում* միայն խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը,
- *առևտրի կենտրոնում* միայն առևտրի իրականացման կազմակերպիչը,
- *հյուրանոցում* միայն հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը,
- *երկաթուղային կայարանում և օդանավակայանում* միայն երկաթուղային կայարանի և օդանավակայանի կազմակերպիչը կամ շահագործողը,
- *Մետրոպոլիտենի կայարաններում* բացառապես «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն:

Փոխանակման կետը պետք է բավարարի նաև [Կանոնակարգ 10-ի](#) 8-րդ գլխով սահմանված փոխանակման կետերի տարածքային և տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող նվազագույն պահանջներին:

Փոխանակման կետի աշխատակիցները պետք է ունենան [Հայաստանի Բանկերի միության](#) կողմից տրված հավաստագրեր փոխանակման կետում աշխատելու համար:

Փոխանակման կետի լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներկայացված է [Կանոնակարգ 10-ի 3-րդ գլխով](#): Նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացվում առձեռն՝ թղթային տարբերակով կամ էլեկտրոնային կրիչով:

Վերոնշյալ փաստաթղթերը ամբողջական և արժանահավատ ներկայացնելուց, ինչպես նաև սահմանված պահանջներին բավարարելուց հետո Կենտրոնական բանկի խորհուրդը 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում լիցենզիան տրամադրելու կամ ներկայացված դիմումը մերժելու վերաբերյալ: Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է փոխանակման կետի լիցենզիայի ստացման դիմումը [Կանոնակարգ 10-ի](#) 10-րդ կետով սահմանված հիմքերով:

Փոխանակման կետի գործունեություն իրականացնելու համար լիցենզավորվող անձը պետք է ունենա առնվազն 1 000 000 ՀՀ դրամ՝ ՀՀ որևէ բանկում բացված ցպահանջ կամ ժամկետային

հաշիվներում, յուրաքանչյուր տարի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար վճարի տարեկան պետական տուրք՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև [ՀՀ հարկային օրենսգրքով](#) սահմանված կարգով, չափերով և ժամկետներում հարկեր:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Հերկյալ նյութը համարվում է [Կանոնակարգ 10-ում](#) սահմանված պահանջների համառոտ նկարագրություն, ուստի առավել մանրամասն տեղեկություններին ծանոթանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել [Կանոնակարգ 10-ը](#) ամբողջությամբ: